

ՀԵԹՈՒՄ Ա. ԹԱԳԱԻՈՐԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԱԿՈՐՈՒՄ

Մոնղոլների յայտնուելը իրանում եւ կովկասում որպէս գերակայող ռազմավարչական ուժ արմատապէս փոփոխեց իրավիճակը ողջ տարածաշրջանում: Ի տարբերութիւն սելջուկեան արչաւանքների ժամանակ որդեգրած մարտավարութեան, մոնղոլների դէմ պայքարում ունեցած մեծ կորուստներով հանդերձ, հայ բնակչութիւնը ոչ թէ զանգուածային լքում էր հայրենիքը, այլ հանդէս էր գալիս աւելի կազմակերպուած՝ փորձելով պահպանել սեփական տիրոջթները: Հայրենիքից արտագաղթը սկիզբ առաւ մոնղոլական հարկային լծի ծանրացմանը զուգընթաց՝ հիմնականում ժ.Գ. դարի վերջերից ժ.Գ. դարասկզբին:

Բազում յաղթանակներ տօնած մոնղոլական բանակները 1236-1243 տարիներին՝ դժուարութեամբ տիրեցին Հայաստանին ու Վրաստանին: Ժ.Գ. դարի առաջին կէսին դեռեւս ամուր էին հայկական եւ վրացական իշխանութիւնների դիրքերը: Մոնղոլական մարտավարութիւնը սակայն զրկեց իշխանական ուժերին միասնական ճակատով հանդէս գալու միջոցից եւ պարտադրեց մտահոգուել պաշտպանելու միայն սեփական տիրոջթները: Նման իրավիճակում, այնուամենայնիւ փորձ կատարուեց ստանալու Արեւմուտքի օժանդակութիւնը եւ այդ նպատակով 1239ին Հայաստանից պատուիրակութիւն ժամանեց Հռոմ Վանական վարդապետի, Վարդան Արեւելցու եւ այլ գործիչների մասնակցութեամբ՝ իր հետ տանելով նաեւ օգնութիւն խնդրելու վերաբերեալ Վրաստանի Ռուսուդան թագուհու գրած նամակը Հռոմի պապին: 1240ին պատուիրակութիւնը սակայն վերադարձաւ յուսախաբ բերելով Պապի պատասխան նամակը՝ Ռուսուդանին, որով ծանուցում էր Հռոմի կողմից օժանդակութեան ցուցաբերման անհ-

1 Այն քուագրուած է 1240 Փետրուարի 13ով, տե՛ս ՏԱԲԱՂՈՒԱ, Ի., Վրաստանը Եւրոպայի արխիւներում եւ գրապահոցներում, (վրացերէն), Հտ. Ա., Թբիլիսի, 1984, էջ 85:

նարինութիւնը. «Ձեր նամակում եղած տեղեկութիւնը, որ թաթարները... յարձակուել են ձեր թագաւորութեան վրայ եւ ձեզ ծանր վնասներ են պատճառել, ... վշտացրեց մեզ»: Հռոմից վերադարձից յետոյ Վարդան Արեւելցիին հինգ տարի մնաց Կիլիկիայում եւ իր խորհրդատուութիւններով աշխուժօրէն մասնակցում եւ օժանդակում էր արքունիքի ու կաթողիկոսարանի աշխատանքներին, իսկ Վանական վարդապետը այցելեց Գանձասար, որտեղ մասնակցեց 1240ի Յուլիսին եկեղեցու օծման արարողութեան: Հռոմից օժանդակութիւն ստանալու անյուսութիւնը ստիպեց Կիլիկիայի հայ իշխանաւորներին սեփական անվտանգութիւնը ապահովելու համար փնտռելու այլ հնարաւորութիւններ եւ մշակել արտաքին քաղաքականութեան նոր ռազմավարութիւն:

Կիլիկիայում եւս իրազեկ էին բուն Հայաստանում մոնղոլների կողմից ընդդիմադիր ուժերի նկատմամբ իրականացուող դժժանակ հաշուեյարդարի եւ բնակչութեան մէջ մեծաքանակ զոհերի մասին: Տարիներ տեւած պատերազմական գործողութիւններին, որի ընթացքում գրաւուեց Մեծ Հայքի գրեթէ ողջ տարածքը, ուշադիր հետեւում էին նաեւ մոնղոլների յետագայ գործողութիւնների հաւանական կամ հնարաւոր բոլոր թիրախները: Հռոմի պապի օգնութեանը դիմել էին նաեւ Իրաքից, Իկոնիայից, Ասորիքից եւ այլ վայրերից: Ինչպէս յայտնի է, Արեւելեան Հայաստանից եւ Վրաստանից մոնղոլների յետագայ արշաւանքներին իրենց զօրաբանակներով մասնակցում էին նաեւ նուաճուած կամ նրանց պարտադրաբար հնազանդութիւն յայտնած հայ եւ վրաց իշխանները, ինչպիսիք էին Աւագ Զաքարեանը, Էլիկում Օրբէլեանը, Հասան Զալալը եւ այլք: Իկոնիայի սուլթանութիւնը ականատես լինելով մինչ այդ սրընթաց յաջողութիւններ արձանագրած մոնղոլական բանակների կողմից Հայաստանում ունեցած դժուարութիւնները, որդեգրեց նրանց դէմ միացեալ դաշինքով հանդէս գալու մարտավարութիւնը: Այդ դաշինքին մասնակցելուց սակայն ձեռնպահ մնաց Կիլիկիայի գահակալ Հեթում Առաջինը, որը որդեգրել էր սպասողական մարտավարութիւն: Էրզրումի (Կարին) եւ Երզնկայի միջեւ գտնուող Զմանկատուկի ճակատամարտում Իկոնիայի սուլթան Ղիաս Էդ-Դինի կրած պարտութիւնից յետոյ միայն 1243ին Հեթում թագաւորի եւ Բաչու զօրավարի միջեւ կնքուեց համաձայնութիւն համագործակցութեան մասին: Կիլիկիան խոյս տուեց մոնղոլական ներխուժումից, որոնք իրենց հարուածի ուղղութիւնը փո-

խաղրեցին դէպի հարաւ-արեւելք՝ Միջագետք եւ Ասորիք: Հայ եւ վրաց իշխանական դասը ամբողջութեամբ չէ, որ ծառայութեան էր անցել մոնղոլների մօտ, կային նաեւ առանձին ներկայացուցիչներ, որոնք անցնելով Ղիաս էդ-Պիլի կողմը, ընդգրկուել էին դիմադրական ուժերի կազմում²: Փաստորէն, ճակատամարտող երկու կողմերում էլ կային հայ եւ վրացի իշխանների զօրամասեր, որոնք կարեւոր դեր էին խաղում ռազմական գործողութիւնների կազմակերպման գործում: Թերեւս այս վերջին հանգամանքը կարող էր լինել այն դրդապատճառներից մէկը, որը հիմք էր հանդիսացել Կոնստանդին կաթողիկոսի կողմից հայոց ուղղուած կոչին՝ ձեռնպահ մնալու մոնղոլների դէմ հանդէս գալու քայլերից, մշակելու համար միասնական դիրքորոշում մոնղոլների հետ յարաբերութիւններում, ինչն անհրաժեշտ էր նաեւ Սմբատ սպարապետի դէպի Կարակորում ձեռնարկուող դիւանագիտական դեսպանագնացութիւնը չձախողելու համար: Կոնստանդին կաթողիկոսի այդ շրջաբերական Թուղթը Հայաստան բերեց Վարդան Արեւելցին, որի ներկայութիւնը եւ գործունէութեան դաշտը փոխադրուեց Արեւելեան Հայաստան: Ինչպէս 1246ին, Սմբատ սպարապետի ճանապարհորդութեան նախօրեակին, այնպէս էլ 1251ին Հեթում Ա.ի Կարակորում ճանապարհուելու նախապատրաստութեան ժամանակ Կաթողիկոսը շրջաբերական նամակներով հանգստութեան կոչեր է ուղղում Հայաստանի բնակչութեանը, չձախողելու մոնղոլների հետ դիւանագիտական այցերի յաջողութեան երաշխիքները: Կաթողիկոսը չի գունազարդում իրականութիւնը, թաթարները մեծ չարիքներ են գործել Հայաստանում, սակայն այդ ամէնը յաղթահարելու համար հարկ է ոչ թէ դիմել ընդվզումի, այլ հոգալ քրիստոնէական հաւատի ամրապնդման եւ նրա անաղարտութեան մասին: Կաթողիկոսն անշուշտ ակնարկում էր 1249ին հայ եւ վրաց իշխանական դասի նկատմամբ կիրառուած պատժիչ գործողութիւնները, ինչը ծանր կորուստների պատճառ դարձաւ բուն Հայաստանում³:

2 LIMPER, B., *Die Mongolen und die christlichen Völker des Kaukasus. Eine Untersuchung zur politischen Geschichte Kaukasiens im 13. und beginnenden 14. Jahrhundert*, Inaugural-Dissertation zur Erlangung des Doktorgrades der Philosophischen Fakultät der Universität zu Köln, Köln 1980, p. 132.

3 ՄՍԹՓԱՆՔԻՆ, Հ., Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական լծի դէմ, Երևան 1990, էջ 86-87:

Կարեւոր է արձանագրել, թէ մոնղոլների մասին հրաշապատումների շարքերը որքան անորոշութիւն էին հաղորդում հասարակութեան մէջ հեռավոր երկրների վերաբերեալ պատկերացումներին, նոյնքան եւ թագաւորական դեսպանորդները լաւատեղեակ էին մոնղոլական արքունիքի անցուղարձին:

Ուշագրաւ է, որ Սմբատ սպարապետի Սամարղանդից Կիպրոսի Հենրի Լուսինեան թագաւորին 1247ին գրած նամակի մէջ խօսուում էր ոչ միայն Հռոմի պապի կողմից մոնղոլական արքունիքին ուղղած նամակի, այլեւ մոնղոլ խանի պատասխան նամակի (1246ին Նոյեմբեր) բովանդակութեան մասին: Հարկ է նկատի ունենալ, որ նամակի բովանդակութիւնը առկայ է նաեւ այլ հեղինակների երկերում (Յովհան դէ Պլանոյ Կարպինի, Սալիմբէնէ Փարմացի): Վարդան Արեւելցու վկայութեամբ 1264ին Հուլաու էլդանի (Իլխանի) հրաւէրով ինքը ներկայացել է նրան Ղուրուլթայի ժամանակ, որտեղ զրոյց է ունեցել խանի հետ⁴:

Հայոց Հեթում Առաջին թագաւորի Մոնղոլիա կատարած առաքելութեան նախապատրաստութիւնը եւ իրականացումը Հայ դիւանագիտութեան պատմութեան մէջ կարեւոր նշանակութիւն ու հետեւանքներ ունեցած քաղաքականութիւն իրականացնելու ձեռնարկում էր: Հեթումի այցը պէտք է հիմք ստեղծէր ոչ միայն Կիլիկիայի անվտանգութիւնը ապահովելու, այլեւ ռազմաքաղաքական ծրագրերով հայ-մոնղոլական լայն համագործակցութիւն ձեւաւորելու համար:

Ինչպէս Սմբատ սպարապետը, այնպէս էլ Հեթումը Կարակորում ուղեւորութեան ընթացքում Կիլիկիայից անցել են Մեծ Հայքի տարածքով, հանդիպումներ ունեցել ինչպէս հայ, այնպէս էլ մոնղոլ կառավարիչների հետ: Կիլիկիայից Հեթում Ա. Թագաւորը Մանգու խանի մօտ ճանապարհուել է 1254ի գարնանը, Մեծ Հայք զնալու համար ծածկաբար անցել Կիլիկիայի նկատմամբ թշնամաբար տրամադրուած իշխանութիւններով, Կարս քաղաքում հանդիպում ունեցել Բաչու նոյինի հետ եւ «պատուեալ ի Անցումն», այնուհետեւ իջեւանել է Քուրդ Վաչուտեանի մօտ՝ Արագածի ստորոտում Արայի լեռան դիմաց գտնուող Վարդենիս իշխանանիստ գիւղում: Հասնելով այնուհետեւ Դեր-

4 ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ, Տիեզերակամ պատմութիւն, Երեւան 2001, էջ 205-208, բնագիր՝ էջ 156-159:

բենտ, նա ժամանել է իթիլ գետի մօտ գտնուող Բաթուի եւ նրա Սարթախ որդու բանակատեղի՝ «մեծարեալ ի նոցունց բազում պատուասիրութեամբ»⁵: Այնուհետեւ Մարերի ամսի 6ին (Մայիսի 13) Թագաւորական շքախումբը ճանապարհուում է դէպի Կարակորում եւ անցնելով Այեխ գետը (այժմ՝ Յաիկ), հասնում է Որ վայրը, որ գտնուում էր Բաթու խանի եւ Մանգու խանի նստավայրերի միջեւ կենտրոնական մասում⁶: Այնուհետեւ անցնելով Երթիճ (այժմ՝ Իրտիշ) գետը, մուտք են գործել Նայիմանի երկիր: Շարունակելով ճանապարհը, ըստ Կիրակոս Գանձակեցու նկարագրութեան, Հեթումի շքախումբը այնուհետեւ գալիս է «ի Խարախըտայն, եւ անցեալ ի Թաթարաստան»⁸, Հոռի ամսի 4ին (13 Սեպտեմբերի) «ի տօնի մաւակատեաց իսաչին» տեսակցութիւն է ունենում Մանգու խանի հետ: «Եւ մատուցեալ զընծայն, մեծարեցաւ ի նմանէ ըստ արժանւոյն. եւ կացեալ յուրդոյն աւուրս յիսուն, եւ տուեալ նմա հրովարտակ նշանաւոր, զի մի ոք իշխեսցէ նեղել նմա եւ գաշխարհ նորա. ետ եւ գիր ազատութեան կելեղեցեաց ընդ ամենայն տեղիս»: Մանգու խանի մօտից Հեթումը 1254ին Սահմի ամսի 23ին (Նոյեմբերի 1) բռնում է վերադարձի ուղին եւ անցնելով Թուրքաստանի, Իրանի եւ Մեծ Հայքի տարածքներով, ճանապարհուելուց ութ ամիս անց նա հասնում է Կիլիկիա 1255ի ամրանը: Հեթումը վերադարձի ճանապարհին Ալուալեխի (Ալմալըք) եւ Իլանսու հարաւարեւմուտք գտնուող Դալասում տեսակցութիւն է ունեցել Հուլաուի հետ, որը եւս ճանապարհուել էր դէպի Իրան: 1255ի գարնանը Արաքսի անցման ժամանակ հանդիպում է Բաչու Նոյինին, որ ճանապարհուում էր Հուլաուին դիմաւորելու համար:

5 ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Պատմութիւն Հայոց, Երեւան 1961, էջ 366-367:

6 Այժմ եւս այդ անուանումով կայ գետ Ուրալ եւ Իրտիշ գետերի միջեւ: Հաւանաբար այդ վայրերում ԺԳ. դարում եղել է նաեւ համանուն բնակավայր:

7 Նայիմանները բնակուում էին Սեւ Իրտիշ գետի եւ Չայսան-Նոր լճի միջեւ:

8 Թաթարաստան անուանում է Մոնղոլիան:

9 Երթուղու տեղանունների մանրամասն թուարկումը Կիրակոս Գանձակեցին լսել է թագաւորից Վարդեմիս գիւղում տունդարձի նստավայրից կանգառի ընթացքում: Տե՛ս ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Պատմութիւն Հայոց, Երեւան 1961, էջ 367-370:

Հեթոմի ճանապարհորդութիւնը դրական արդիւնքներ ունեցաւ մօտ մէկուկէս տասնամեակ Կիլիկիան զերծ պահելու մոնղոլական արշաւանքից: Աւելին, պատմիչների հաղորդմամբ այդ այցի ընթացքում Կիլիկիային տրուեցին արտօնութիւններ, որոնք կազմուել եւ ներկայացուել էին հայկական կողմից: Ուշագրաւ է, որ արտօնութիւններ ստանալու ակնկալիքը արդէն ունէր Կոստանդին կաթողիկոսը, ինչի մասին նշում է 1251ին գրած նամակում¹⁰: Այդ վստահութիւնը կարող էր հիմնուած լինել ինչպէս Սմբատ սպարապետի կողմից բերուած արտօնութիւնների հանգամանքով¹¹, այնպէս էլ այն շահագրգռութեամբ ու սպասումներով, որ ունէին մոնղոլները Կիլիկիայի հայոց թագաւորութիւնից: Սմբատ սպարապետը արդէն տեղեակ էր Արեւելքում եւ մասնաւորապէս մոնղոլական արքունիքում քրիստոնեաների ունեցած դիրքի մասին: Լայն գործունէութիւն էին ծաւալել ոչ միայն նեստորականները¹², այլեւ հայազգի քարոզիչները: Ժողարի Կատալոնիան քարտէզում նշուած քրիստոնէական միակ վանքը Իսիկ-Կոլ լճի մօտ գործող հայկական վանքն էր: Հեթոմ Ա. թագաւորի մոնղոլներին ներկայացրած պահանջների հաւաստիութեան վերաբերեալ ժամանակակից պատմաբանների վերապահութիւնները արդարացուած չեն, եւ պէտք է կարծել, որ այդ պահանջները նախօրօք կազմուել էին դեռեւս Կիլիկիայում եւ այդ մոնղոլներին ներկայացուած է որպէս Մերձաւոր Արեւելքում հայ-մոնղոլական համագործակցութեան համար ռազմավարական ծրագիր: Ըստ Հեթոմ պատմիչի, Հեթոմ Ա.-ն

1. Խնդրում է մոնղոլ տիրակալին իր ողջ ազգով դառնալու քրիստոնեայ¹³:

10 ԽԱԶԻԿԵԱՆ, Լ., *Աշխատութիւններ*, Հտ. Ա., Երևան, 1995, էջ 169:

11 ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, անդ, էջ 364:

12 BAMANA, G., ed., *Christianity and Mongolia. Past and Present, Proceedings of the Antoon Mostaert Symposium on Christianity and Mongolia (August 2006)*, Ulaanbaatar 2006.

13 Խման առաջարկութիւն կատարել էր նաեւ Հոռմի պապի կողմից ուղարկուած պատուիրակութիւնը Բաշու նոյինի մօտ, որն այդ ժամանակ գրուելում էր Հայաստանում՝ Սիսիանում 1247ին, ինչի մասին հաղորդում է Սիմոն դը Սենտ-Փօլիստիները: Հանգամանօրէն տե՛ս նաեւ ЮРЧЕНКО, А. Г., *Историческая география политического мифа: Образ Чингиз-Хана в мировой литературе XIII-XV вв.*, Санкт-Петербург 2006.

2. Մշտական բարեկամութիւն եւ խաղաղութիւն լինի իրենց միջեւ:

3. Քրիստոնէական եկեղեցիներ կառուցելու իրաւունք թաթարների տիրապետութեան ողջ տարածքում եւ հայերը ազատ լինեն զանազան հարկերից ու տուրքերից:

4. Սարակինոսներից ետ խլուրի սուրբ երկիրը ու յանձնուրի քրիստոնեաներին:

5. Վերացուրի Բաղդադի խալիֆայութիւնը, որ նրանց (մահմեդականների) հաւատի գլխաւորն է:

6. Կիլիկիան անհրաժեշտութեան դէպքում օգնութիւն ստանայ մոնղոլական ուժերից:

7. Հայաստանի թագաւորութեան թուրքերի կողմից խլուած հողերը վերադարձուեն Կիլիկիային¹⁴:

Հեթումի ներկայացրած պահանջների եւ Մանգու խանի պատասխանի վերաբերեալ պատմաբանների թերահաւատ դիրքորոշմամբ աչքաթող է արւում նաեւ այն հանգամանքը, որ ըստ էութեան այդ առաջարկութիւնների մի մասը իրականացուել է Հեթումի այցին յաջորդած տարիներին: Մաղաքիա արեղայի համառօտ հաղորդմամբ՝ խանը «գամեմայն բան նորա հոգաց ըստ կամաց նորա (իմա՝ Հեթումի) եւ դարձոյց մեծ ուրախութեամբ յաշխարհ իւր»¹⁵:

Ամփոփելով պէտք է ասել, որ Հեթումը կարեւոր շրջադարձ էր կատարում արտաքին քաղաքականութեան մէջ՝ ելնելով ժամանակի միջազգային իրադրութեան մէջ ստեղծուած իրավիճակից: Հռոմի կողմից իրական օգնութիւն ստանալու անյուսուցիւթիւնը, Բիւզանդիայում ստեղծուած խառնակ իրավիճակը (Լատինական եւ Նիկիայի կայսրութիւններ՝ 1204-1260), Իկոնիայի եւ նրա դաշնակիցների պարտութիւնը, խաչակրաց իշխանութիւնների վերացումն ու խաչակրաց արշաւանքների ձախողումները եւ այլն, որեւէ դաշնակցութեան հնարաւորութիւն կամ

14 Հեթոմի ՊԱՏՄԻԶ, Պատմութիւն քաթարաց, Ս. Ղազար, Վեներիկ 1842, էջ 42-43:

15 Գրիգոր Ա. ԿՆԵՐՑԻ, Պատմութիւն քաթարաց, Երուսաղէմ 1974, էջ 37-38:

յուսադրում չէին կարող ներշնչել Հեթումին մոնղոլների դեմ հանդէս գալու համարձակութեան դէպքում: Աւելին, մոնղոլների հետ դաշինքը քաղաքակրթական զիջումներ չէր պարունակում եւ միանգամայն ձեռնտու էր հայոց համար: Պայմանագիրը անվտանգութեան երաշխիքներ էր խոստանում ինչպէս ռազմա-քաղաքական, այնպէս էլ հոգեւոր-եկեղեցական ոլորտում: Միաժամանակ Հեթումը շարունակում էր սերտ կապերը Արեւմուտքի հետ եւ արտօնութիւններ էր շնորհում տեւտոնեան միաբանութեանը Կիլիկիայում:


Հայ-մոնղոլական համագործակցութեան յետագայ ընթացքը խոչընդոտուեց մոնղոլական կայսրութեան մէջ 1262ին սկսուած ներքին պայքարի արդիւնքում, նրա տրոհման եւ նրանց միջեւ երկարատեւ պատերազմների հետեւանքով:

Մոնղոլական մեծ խանի կենտրոնատեղի ներկայանալու պահանջը մոնղոլական համակարգում սեփական կալուածքները պահպանելու հիմնական ուղիներից էր ինչպէս քրիստոնեաների, այնպէս էլ մահմեդականների համար: Այդ միջոցին դիմեցին ոչ միայն Կիլիկիայի եւ Վրաստանի թագաւորները, այլեւ Արեւելեան Հայաստանի իշխանական դասի մի շարք նշանաւոր ներկայացուցիչներ (Մանգու խանի մօտ՝ Աւագ Զաքարեան, Սմբատ Օրբէլեան երկիցս, եւ ուրիշներ, Բաթու խանի մօտ՝ Հասան Զալալ, Գրիգոր Տղայ Դոփեան, եւ ուրիշներ):

Մոնղոլիա կատարած ճանապարհորդութիւնները ընդլայնում էին Արեւելքի մասին ունեցած աշխարհագրական, ազգագրական, քաղաքական եւ այլ բնոյթի իմացութիւնները ոչ միայն Հայաստանում, այլեւ դրանք տարբեր ճանապարհներով թափանցում էին նաեւ Արեւմուտք: Մոնղոլների եւ ընդհանրապէս Հեւուաւոր Արեւելքի մասին Կիրակոս Գանձակեցու Պատմութեան մէջ եղած վկայութիւնները ցոյց են տալիս, որ իրական տեղեկութիւնների հետ միասին տարածում էին ստանում նաեւ հրաշապատումներ, որոնք յատուկ էին ոչ միայն հայկական միջավայրին¹⁶:

ՊԱՒԵԼ ԶՈՒԱՆՆԵԱՆ

ՀԵԹՈՒՄ Ա. ԹԱԳԱՒՈՐԻ ԿԱՐԱԿՈՐՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՐԹՈՒՂԻՆ



Riassunto

IL VIAGGIO DEL RE ARMENO HETHUM I A KARAKORUM

PAVEL CHOBANYAN

Sul viaggio del re armeno Hethum I a Karakorum dettagliate informazioni ci provengono dallo storico Kirakos di Ganjak, che incontrò il sovrano sulla strada del ritorno, nel borgo armeno di Vardenis. Membri del corteo regale erano certamente in possesso di precisi appunti relativi sia all'itinerario seguito che agli accordi diplomatici stipulati, e Kirakos di Ganjak, a sua volta, si è certamente basato su questi scritti per stendere i suoi resoconti. Per questo motivo le sue informazioni sono da ritenersi affidabili e preziose.

Nonostante siano stati condotti fino ad oggi diversi studi su questo viaggio, nessuna mappa è mai stata tracciata dell'itinerario percorso, cosa che invece il presente studio si è proposto di realizzare.

Il viaggio di Hethum I fu compiuto non solo come atto di sudditanza alla corte mongola, ma anche per proporre una collaborazione nel Vicino Oriente contro i nemici del Regno di Cilicia, iniziativa che fu accolta con favore dal khan e fu messa in pratica con successo dopo il ritorno di Hethum in patria. In questo senso, i dati offerti dall'omonimo storico Hethum (Hayton) sono del tutto veritieri, essendo stati probabilmente attinti da documenti conservati presso l'archivio reale ciliciano.